# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/27-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | . | . | . | Զրահաբաճկոն՝ համալրումներով ՍԶ (Զրահաբաճկոն՝ տակտիկական գոտիով և պատյաններով, առանց բալիստիկ զրահաքարերի) Զրահաբաճկոնը կազմված է դիմային, թիկունքային և երկու կողային հատվածներից, որոնք ամրանում են արագ անջատման, արձակման պլաստմասե G-Hook ճարմանդիներով: Դիմային և թիկունքային մասերը ուսերի վրա միմյանց ամրանում են կախաններով , որոնք , նույնպես, դիմացից ունեն արագ անջատման համակարգեր: Առջևի և թիկունքի մեկուսամասերի չափերը կարգավորվում են կպչուկ ժապավեններով՝ 24-ից 30 սմ լայնությամբ: Առջևի և թիկունքի մեկուսամասերը նախատեսված են վերին անկյուները հատած զրահատարրերի համար (ESAPI Shooter`s Cut): Զրահաբաճկոնը բոլոր հատվածներում ՝ դիմային, թիկունքային, կողային, ունի արտակարված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | մոլլե համակարգի ամրագոտիներ: Դիմային և թիկունքային հատվածները բազմաշերտ են, ունեն սպունգային բարձիկներ, ցանցային օդափոխման շերտեր, ինքնակպչուն ժապավեններով հատվածներ: Ներսի մասում ունի զրահե վահանների տեղադրման համար նախատեսված գրպաններ, որոնք կոճկվում են (ամրանում են) նվազագույնը 4 սմ լայնքով, բարձր որակի ինքնակպչուններով: Կարերը ամուր են, ամրակարերը՝ զիգզագաձև: Արտաքին մակերեսների վրա պատրաստված են 4-6 շարք 25մմ լայնությամբ ՄՈԼԼԵ ժապավեններ, վերին հատվածում տարբերանշաններ փակցնելու համար կպչուն ժապավեններով հատվածներ: Պատրաստված է 1000 դեն նեյլոնե և/կամ 100% պոլիէսթեր նյութերից, նեյլոնե ժապավենից և պարաններից, հիմնական կարի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1400 N , ներքին կարերի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1000 N : ՈՒնի զույգով կրծքամասի և գոտկատեղերի արագ ամրացման-արձակման պոլիմեռային ճարմանդներ՝ նեյլոնե կախաններով, որոնք ամուր են, թույլ ճկվող, դժվար կոտրվող: Զրահաբաճկոնի քաշը՝ առանց ամրացվող պատյանների 2.9-3.6 կգ (ունիվերսալ չափս), դիմային և հետին վահանիկների լայնքը՝ 30-34սմ, բարձրությունը՝ 37-42 սմ: Դիմային և կողային հատվածները ունեն 9 հատ AK-74 ինքնաձիգի պահեստատուփերի համար նախատեսված գրպանիկներ, որոնցից 3-4 հատը՝ դիմային մասում, ունեն պահեստատուփերի ամուր ֆիքսման համակարգեր: Պատյաններ: 1 հատ կտորային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կամ պլաստմասսայե ատրճանակի պատյան (կոբուռա Մակառովի ատրճանակի), գոտու մոլլեին ամուր ամրացնելու և ատրճանակը ֆիքսելու համակարգերով, 1 հատ՝ գոյատևման լրակազմի պատյան (նվազագույնը՝ 12սմ լայնք*16սմ երկարություն*7 սմ հաստություն), 1 հատ առաջին բուժօգնության պարագաների համար (13սմ*20սմ*9սմ), և 1 հատ ռադիոկայանի տեղադրման (5սմ*10սմ*4սմ): Զրահաբաճկոնին ամրացվում է նաև, 2 հատ 1 տեղանոց նռնակի (Ֆ-1) չափսերին համարատասխան, ամուր փակվող պատյաններ, 1 հատ դատարկ պահեստատուփերի համար նախատեսված, ծալովի պատյան, 1 հատ անոթախեղդիչ, ժգուտային համակարգ (տուրնիկետ), և 2 հատ ինքնակպչուն ժապավենով ամրացվող ասեղնագործված կամ պոլիմերային 7սմ* 13սմ չափսի տարբերանշաններ ( գույները, ձևը, չափսերը և գրվածքները Մատակարարին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո): Տակտիկական գոտին երկշերտ է, կազմված է ներքին՝ ինքնակպչունով վրակարված ազատ ծայրերով գոտիից և արտաքին գոտիից, որի ծայրերին մետաղական, կարգավորվող, ամուր ճարմանդներ են և ներսի մասից ինքնակպչուն ժապավեն է, որով ամրանում է ներքին գոտուն: Արտաքին գոտու երեսին ամրակարված է երկշերտ մոլլէ (տակտիկական ամրացման) համակարգ: Մարտաբաճկոնի արտաքին տեսքը, ձևը, ձևվածքը ըստ Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշների: Մարտաբաճկոնի, տակտիկական գոտիի և պատյանների գունավորումը՝ կանաչ: 180 հատի կոնքի չափսերի փոփոխման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հնարավորությունը` 95սմ-140սմ, 40 հատինը` 105սմ-150սմ մնացած քանակության չափսերը` ունիվերսալ (75սմ-125սմ չափսի): Պատյանների և աքսեսուարների չափսերի թույլատրելի շեղումը` 5%: Համարժեքության սկզբունքով փոխարինումը այլ չափսերի և ձևվածքի թույլատրվում է միայն Պատվիրատույի համաձայնությամբ: Փաթեթավորումը և պիտակավորումը գործարանային, ստվարաթղթե արկղերով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

МИРРОРС ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/27-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | |